Հայտարարություն Լեռնային Ղարաբաղում հայկական մշակութային ժառանգության պաշտպանության վերաբերյալ

14 սեպտեմբերի 2026 թ.

2026 թվականի սեպտեմբերի 11-12-ին Ադրբեջանում հավատարմագրված 58 երկրների դիվանագիտական կորպուսի և 9 միջազգային կազմակերպությունների շուրջ 150 ներկայացուցիչներ այցելել են էթնիկ զտման ենթարկված Լեռնային Ղարաբաղ (Արցախ): Պատվիրակության կազմում էր նաև Հարավային Կովկասի հարցերով Եվրոպական միության հատուկ ներկայացուցիչ Մագդալենա Գրոնոն:

Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիևի արտաքին քաղաքականության հարցերով խորհրդական Հիքմեթ Հաջիևի ուղեկցությամբ խումբն այցելել է Ստեփանակերտ, Շուշի, Գանձասարի և Դադիվանքի վանական համալիրներ: Նրանք այցելել են նաև Ստեփանակերտի «Հաղթանակի զբոսայգի», որը, ըստ էության, Լեռնային Ղարաբաղի ամբողջ հայ բնակչության էթնիկ զտման խորհրդանիշ է և կառուցվել է Ստեփանակերտի պատմական թաղամասի տարածքում: Բացի այդ, տարածվել են տեսագրություններ, որտեղ դիվանագետները Շուշիում պարում և զվարճանում են:

Գանձասարի և Դադիվանքի վանական համալիրներ այցի ընթացքում Հիքմեթ Հաջիևը դրանք ներկայացրել է որպես կովկասյան աղվանական քրիստոնեական ժառանգության մաս՝ հայերին մեղադրելով հուշարձանները փոփոխելու մեջ, երբ տարածաշրջանը գտնվել է հայկական վերահսկողության ներքո: Որպես հայկական պատմական կեղծարարության «ապացույց»՝ Հիքմեթ Հաջիևը օտարերկրյա դիվանագետներին ցույց է տվել Գանձասարի վանքի Մատենադարանի թանգարանում պահվող գրքերի դատարկ էջերը: Խմբի որոշ անդամներ ծիծաղել են, երբ նա ցուցադրել է այդ դատարկ էջերը:

Այցը և դրա ընթացքում առաջ մղված խոսույթը Ադրբեջանի կողմից հայկական ժառանգության ծագումը փոփոխելու՝ պետական հովանավորությամբ իրականացվող շարունակական քաղաքականության ակնհայտ օրինակներ են՝ որպես էթնիկ զտման քաղաքականության շարունակություն: Այս քաղաքականությունը նոր չէ. Ադրբեջանի վարած քաղաքականությունն արձանագրված է ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման կոմիտեի (CERD)[1] և մշակութային իրավունքների հարցերով ՄԱԿ-ի հատուկ զեկուցողի կողմից: Մասնավորապես,

Հատուկ զեկուցողը մտահոգություն է հայտնել, որ «մարդկանց, հուշարձանների և խորհրդանիշների նկատմամբ համակցված հարձակումները, պատմական խոսույթի կեղծումը և տեղանունների ջնջումը, ինչպես նաև հայերի վերաբերյալ բացասական խոսույթը կարող են հանգեցնել մշակութային զտման և խորապես բացասական ազդեցություն ունենալ տարածաշրջանում տևական խաղաղությունը վերականգնելու հնարավորությունների վրա»:[2]

Այնուամենայնիվ, այս քաղաքականությունն առավել ինտենսիվ է դարձել այն բանից հետո, երբ Լեռնային Ղարաբաղի տարածքներն անցել են Ադրբեջանի վերահսկողության տակ, և իշխանությունները խոսքից անցել են գործողությունների: Ավելին, միջազգային կազմակերպությունների այն առաջարկությունները կատարելու փոխարեն, որոնցով Ադրբեջանին կոչ է արվում ուժեղացնել այդ վայրերի պահպանությանն ուղղված ջանքերը՝ միաժամանակ ապահովելով էթնիկ հայ համայնքների հետ արդյունավետ և բովանդակային

խորհրդակցություններ, Ադրբեջանի իշխանությունները հետևողականորեն շարունակել են ոչնչացնել և փոփոխել մշակութային արժեքները, ինչպես նաև ժխտել դրանց հայկական ծագումը:

Ադրբեջանի գործողությունները չեն սահմանափակվում միայն մշակութային ժառանգության օբյեկտների ֆիզիկական վնասմամբ և ոչնչացմամբ, այլ նաև ուղղված են, վերականգնման պատրվակով, դրանց մշակութային և պատմական արժեքի, ինչպես նաև Լեռնային Ղարաբաղի հայկական մշակութայինժառանգության ինքնության փոփոխմանը: Նմանօրինակներից է Շուշիի Սուրբ Ամենափրկիչ (Ղազանչեցոց) մայր տաճարի հիմնական առանձնահատկությունների փոփոխումը:[3]

Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովը (ԵԽՎ) հայկական մշակութային ժառանգության պաշտպանության խնդրին անդրադարձել է Լեռնային Ղարաբաղի հակամարտության հումանիտար հետևանքների վերաբերյալ 2391/2021 բանաձևում՝ մտահոգություն հայտնելով «բազմաթիվ հայկական եկեղեցիների, վանքերի, խաչքարերի և մշակութային ժառանգության այլ ձևերի ապագայի վերաբերյալ, որոնք կրկին անցել են Ադրբեջանի վերահսկողության տակ»: ԵԽՎ-ն նաև մտահոգություն է հայտնել «Ադրբեջանում ձևավորվող այն խոսույթի առնչությամբ, որը խթանում է «կովկասյան-աղվանական» ժառանգությունը՝ փոխարինելու այն, ինչ ընկալվում է որպես «հայկական» մշակութային ժառանգություն», և ՅՈՒՆԵՍԿՕ-ին կոչ է արել ուսումնասիրել ձևավորվող այս խոսույթը՝ համոզվելու համար, որ այն չի շահարկվում:[4]

ՅՈՒՆԵՍԿՕ-ի վերջին հրապարակային հաղորդագրության համաձայն՝ առաքելությունը դեռ սպասում է Ադրբեջանի համաձայնությանը:[5]

2021 թվականի դեկտեմբերի 7-ին Արդարադատության միջազգային դատարանը ժամանակավոր միջոցների վերաբերյալ որոշում է կայացրել՝ ի թիվս այլնի, պարտավորեցնելով Ադրբեջանին ձեռնարկել բոլոր անհրաժեշտ միջոցները՝ կանխելու և պատժելու հայկական մշակութային ժառանգության նկատմամբ վանդալիզմի և պղծման գործողությունները, ներառյալ, սակայն չսահմանափակվելով եկեղեցիներով և այլ պաշտամունքի վայրերով, հուշարձաններով, նշանավոր վայրերով, գերեզմանատներով և արտեֆակտներով:[6]

Չնայած այս ժամանակավոր միջոցին՝ 2022 թվականի փետրվարի 3-ին Ադրբեջանի մշակույթի նախարար Անար Քարիմովը մամուլի ասուլիսի ընթացքում հայտարարել է, որ ստեղծվել է տեղական և միջազգայինփորձագետներից կազմված աշխատանքային խումբ, որը պատասխանատու է լինելու «աղվանական կրոնական տաճարների վրա հայերի կողմից գրված շինծու հետքերը» հեռացնելու համար:[7] Շարունակական մշտադիտարկումը ցույց է տալիս, որ Ադրբեջանը չիկատարում սահմանված ժամանակավոր միջոցը:[8]

Քանի որ մշակութային արժեքները դիտվում են որպես տարածքային պատկանելիության, ինքնության և պատմական ներկայության նյութական ապացույց, Ադրբեջանի քաղաքականությունը հայերի՝ տվյալ տարածքին պատկանելությունը ժխտելու փորձ է: Արդյունքում հուշարձանների ոչնչացումը, պահպանումը, վերականգնումը և նույնիսկ դրանց պատմական պատկանելության վերագրումը ձեռք են բերել բուն հուշարձանների սահմաններից դուրս եկող նշանակություն:

Ադրբեջանի իշխանությունների գործողությունները ցույց են տալիս, որ մշակութային ժառանգությունը երբեք չի գործել միայն որպես պատմական արտեֆակտների կամ ճարտարապետական հուշարձանների հավաքածու, այլ դարձել է տարածքային լեգիտիմության շուրջ պայքարի առանցքային դաշտ և, որպես

հետևանք, էթնիկ զտումը կամ Միջազգային քրեական դատարանի Հռոմի կանոնադրությամբ սահմանված բնակչության բռնագաղթի կամ բռնի տեղահանման հանցագործությունը լեգիտիմացնելու միջոց:

Նման միջոցառումներին մասնակցելը, նման խոսույթներին աջակցելը և երկու կողմերին հավասարեցնող մոտեցումը չեն ապահովում արդարություն որևէ կողմի զոհերի համար, վնասում են տևական խաղաղության հաստատմանը և միաժամանակ ծառայում են Ադրբեջանի կողմից իրականացված էթնիկ զտման և մարդու իրավունքների այլ խախտումների արդարացմանը:

Այցից հետո Հարավային Կովկասի հարցերով Եվրոպական միության հատուկ ներկայացուցիչ Մագդալենա Գրոնոն «X»-ում գրել է. «Խիստ տարբերվող տեսակետներն ու խոսույթները շարունակում են պահպանվել, օրինակ՝ որոշ վայրերի ծագման վերաբերյալ, և դրանք պետք է քննարկվեն Ադրբեջանի և Հայաստանի միջև, որպեսզի անցյալ հակամարտության այս կողմը ևս հաղթահարվի նրանց ավելի լայն հաշտեցման ջանքերի շրջանակում»:[9]

Մենք՝ Հայաստանի ներբռնստորագրյալ քաղաքացիական հասարակության կազմակերպություններս, խոր մտահոգություն ենք հայտնում օտարերկրյա դիվանագետների, հատկապես Եվրոպական միության հատուկ ներկայացուցիչ Մագդալենա Գրոնոյի գործողությունների վերաբերյալ, որոնք լեգիտիմացնում են հայ բնակչության էթնիկ զտումը և դրա հետևանքները, այդ թվում՝ Լեռնային Ղարաբաղում հայկական հետքերի ջնջումն ու ոչնչացումը: Սա խոր անհարգալից վերաբերմունք և վիրավորանք է երեք տարի առաջ իրենց տներից բռնի տեղահանված մարդկանց նկատմամբ և չի նպաստում իրական և տևական խաղաղության հաստատմանը:

Ակնհայտ է, որ Ադրբեջանը շարունակում է Լեռնային Ղարաբաղի պատմամշակութային հուշարձաններին կատմամբ իր ռևիզիոնիստական քաղաքականությունը, ներառյալ՝ պատմամշակութային հուշարձանների ֆիզիկական ոչնչացումը, վնասումն ու վանդալիզմը, դրանց հայկական ծագման ժխտումը և դրանք «կովկասյան աղվանական» ծագում ունեցող հուշարձաններ հռչակելը, այդ թվում՝ հուշարձաններից հայկական հետքերի հեռացման միջոցով:

Ելնելով վերոգրյալից՝ մենք կոչ ենք անում այն պետությունների կառավարություններին և միջազգային կազմակերպություններին, որոնց ներկայացուցիչներն այցելել են Լեռնային Ղարաբաղ, և հատկապես Եվրոպական միությանը՝

- հորդորել Ադրբեջանի կառավարությանը կատարել Արդարադատության միջազգային դատարանի՝ ժամանակավոր միջոցների վերաբերյալ որոշումը և կանխել հայկական մշակութային և կրոնական ժառանգության ոչնչացումը, վանդալիզմը, պղծումը, ինչպես նաև դրա յուրացումն ու ծագման փոփոխումը,
- զերծ մնալ այնպիսի միջոցառումներին մասնակցելուց, որոնք կարող են ծառայել էթնիկ և մշակութային զտումների լեգիտիմացմանը,
- պահանջել հայկական մշակութային ժառանգության ոչնչացման և յուրացման բոլոր դեպքերի հետաքննություն՝ ՄԱԿ-ի Ռասայական խտրականության վերացման կոմիտեի առաջարկությանը համապատասխան,
- հետամուտ լինել Ադրբեջան անկախ միջազգային մշտադիտարկման առաքելություն ուղարկելուն՝ Ադրբեջանի վերահսկողության տակ անցած հայկական մշակութային ժառանգության պաշտպանությունն ապահովելու նպատակով:

Ստորագրող կազմակերպություններ

Իրավունքների պաշտպանություն առանց սահմանների ՀԿ
Ժողովրդավարության և անվտանգության տարածաշրջանային կենտրոն
Արդարադատության նոր մշակույթ ՀԿ
Թրանսփարենսի Ինթերնեշնլ հակակոռուպցիոն կենտրոն ՀԿ
Իրավունքների կենտրոն ՀԿ
Լրագրողներ հանուն մարդու իրավունքների ՀԿ
Հանուն հավասար իրավունքներ» կրթական կենտրոն ՀԿ
Հելսինկյան ասոցիացիա իրավապաշտպան ՀԿ
•Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ
Իրավունքի զարգացման և պաշտպանության հիմնադրամ
Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն ՀԿ
«Հազարաշեն» ազգաբանական հետազոտությունների հայկական կենտրոն
Հանրային լրագրության ակումբ
Իրազեկ քաղաքացիների միավորում
Մարդու իրավունքների հետազոտությունների կենտրոն
ԳորիսԼԱԲ համայնքային զարգացման կենտրոն